Ardshinbank

Ստորև ներկայացվում են ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար վարկային պրոդուկտների մասով Բանկի մոտեցումների մանրամասները. **փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները:**

| ՀԱՐՑ | ՊԱՏԱՍԽԱՆ |
|---|---|
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ** | |
| Ի՞նչ է նշանակում «Վարկային արձակուրդ» | «Վարկային արձակուրդ» նշանակում է, որ ֆիզիկական անձ, անհատ ձեռներեցներ հաճախորդները վարկային պարտավորությունների գծով մարտի 16-ից մինչև հունիսի 1-ը ներառյալ հերթական մարումներ և վճարումներ չիրականացնելու դեպքում չեն համարվելու ժամկետանց, հետևաբար տույժ, տուգանքներ չեն հաշվարկվելու և նշված ժամանակահատվածում պարտավորությունները չկատարելու համար հավելյալ տեղեկատվություն ԱՔՌԱ վարկային բյուրոյին և վարկային ռեգիստրին չի տրամադրվելու: |
| Որքա՞ն է տևելու «Վարկային արձակուրդ»-ը | «Վարկային արձակուրդ»-ն ավարտվելու է հունիսի 1-ին: |
| «Վարկային արձակուրդ»-ի ընթացքում կարո՞ղ եմ կատարել մարումներ | Այո, «Վարկային արձակուրդ»-ի ընթացքում վարկի գծով կարող են կատարվել պայմանագրով և ժամանակացույցով նախատեսված մարումները:<br>Վարկերի մարումների տեղափոխության արդյունքում հավելյալ տոկոսագումար վճարելուց խուսափելու նպատակով հորդորում ենք հնարավորության դեպքում կատարել մարումները գրաֆիկով սահմանված ժամկետներում օգտվելով՝<br>• Արդշինբանկի Մոբայլ Բանկինգ հավելվածից,<br>• Բանկի ինքնասպասարկման սրահներում 24/7 ռեժիմով աշխատող տերմինալներից,<br>• Telcell, Easy Pay, IDram համակարգերի տերմինալներից<br>կամ մոտենալով բանկի մոտակա մասնաճյուղ: |
| Ինչպե՞ս կատարել վարկի մարումներ «Վարկային արձակուրդ»-ի ընթացքում | Մարումներ հնարավոր է կատարել օգտվելով՝<br>• Արդշինբանկի Մոբայլ Բանկինգ հավելվածից,<br>• Բանկի ինքնասպասարկման սրահներում 24/7 ռեժիմով աշխատող տերմինալներից,<br>• Telcell, Easy Pay, IDram համակարգերի տերմինալներից<br>կամ մոտենալով բանկի մոտակա մասնաճյուղ: |
| Ի՞նչ չափով կատարել վարկի մարումներ «Վարկային արձակուրդ»-ի ընթացքում | Վարկերի մարումների տեղափոխության արդյունքում հավելյալ տոկոսագումար վճարելուց խուսափելու նպատակով հորդորում ենք հնարավորության դեպքում կատարել մարումները գրաֆիկով նախատեսված չափով: |

| | |
|---|---|
| Ի՞նչ ժամկետներում կատարել վարկի մարումներ «Վարկային արձակուրդ»-ի ընթացքում | Վարկի մարումները կարող եք կատարել ձեզ հարմար ցանկացած ժամանակ՝ մինչև «Վարկային արձակուրդ»-ի ավարտը՝ հունիսի 1-ը: |
| Բանկի մասնաճյուղերն աշխատու՞մ են | Այո, Բանկի մասնաճյուղերն աշխատում են բնականոն ռեժիմով: Մասնաճյուղերի հասցեները և աշխատանքի ժամերը հասանելի են հետևյալ հղումով. https://www.ardshinbank.am/branches-and-atms: |
| Ի՞նչ է նշանակում «կուտակված պարտք» | Կուտակված պարտքը իրենից ներկայացնում է հաճախորդի կողմից վճարման ենթակա ողջ գումարը, այդ թվում՝ վարկի մայր գումար, տոկոսագումար, վարկի սպասարկման վարձ, մինչև մարտի 16-ը կուտակված ժամկետանց պարտքի դիմաց տուգանային տոկոսագումար և տույժ: |
| «Վարկային արձակուրդ»-ի ավարտից հետո ո՞ր գումարների մասով է կատարվելու փոփոխություն | Փոփոխություն կատարվելու է կուտակված պարտքի ողջ գումարի մասով: Կուտակված պարտքը իրենից ներկայացնում է հաճախորդի կողմից վճարման ենթակա ողջ գումարը, այդ թվում՝ վարկի մայր գումար, տոկոսագումար, վարկի սպասարկման վարձ, մինչև մարտի 16-ը կուտակված ժամկետանց պարտքի դիմաց տուգանային տոկոսագումար և տույժ: |
| Ե՞րբ են կատարվելու փոփոխությունները | Վարկերի հետ կապված փոփոխությունները կատարվելու են «Վարկային արձակուրդ»-ի ավարտին: |
| Փոփոխությունները կատարվելու են ինքնաշխա՞տ (ավտոմատ), թե պետք է դիմել Բանկ | Ներկայացված փոփոխություններն իրականացվելու են ինքնաշխատ (ավտոմատ), որևէ դիմումի կարիք չկա:<br>Ներկայացված փոփոխություններից տարբերվող պահանջների դեպքում անհրաժեշտ կլինի դիմել Բանկ՝ ուղարկելով նամակ Բանկի էլ. փոստի հասցեին, այցելելով Բանկի ինտերնետային կայքի հետադարձ կապի բաժին կամ զանգահարելով Բանկի Կոմունիկացիոն կենտրոն: |
| Ե՞րբ պետք է սկսել մարել կուտակված պարտքը | Կուտակված պարտքը պետք է սկսել մարել «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 2-ից սկսած՝ ժամանակացույցով նախատեսված օրերին:<br>Օրինակ՝<br>Ա) եթե ժամանակացույցով սահմանված մարման օրը ամսի 25-ն է, ապա կուտակված պարտքը պետք է սկսել մարել հունիսի 25-ին,<br>Բ) եթե ժամանակացույցով սահմանված մարման օրը ամսի 1-ն է, ապա կուտակված պարտքը պետք է սկսել մարել հուլիսի 1-ին:<br>Այն վարկերը, որոնք փոփոխության չեն ենթարկվելու և հունիսի 2-ին կունենան կուտակված պարտք, հունիսի 2-ին վճարում չկատարվելու դեպքում կհամարվեն ժամկետանց: Տվյալ վարկերի մասին տեղեկատվությունը հասանելի է յուրաքանչյուր վարկատեսակի հարցուպատասխանում: |
| Ինչպե՞ս եմ տեղեկացվելու իմ վարկի հետ կատարված փոփոխությունների մասին | Բանկը կծանուցի վարկի հետագա սպասարկման համար կարևոր բոլոր փոփոխությունների իրականացման մասին ծանուցման էլեկտրոնային եղանակներով: |

| | |
|---|---|
| Ինպե՞ս պետք է կատարել վարկի մարումները «Վարկային արձակուրդ»-ից հետո | Մարումները կատարվելու են՝ համաձայն վարկի պայմանների և ժամանակացույցի: Վերջինիս փոփոխության դեպքում կտրամադրվի փոփոխված ժամանակացույց: |
| Ի՞նչ փոփոխություններն են նախատեսվում ժամկետանց վարկերի համար | Ա. Եթե մարտի 16-ի դրությամբ վարկի ժամկետանց օրերի քանակը չի գերազանցել 45-ը,<br>ապա Բանկը կիրականացնի փոփոխություններ՝ համաձայն ներկայացված աղյուսակի:<br>Բ. Եթե մարտի 16-ի դրությամբ վարկի ժամկետանց օրերի քանակը գերազանցել է 45-ը, ապա վարկի նկատմամբ որևէ փոփոխություն չի կատարվի, ինչը նշանակում է, որ հունիսի 2-ին կվերսկսվի ժամկետանց պարտավորությունների հաշվարկը և կուտակված ժամկետանց պարտավորությունների նկատմամբ տուգանային տոկոսների և տույժերի հաշվեգրումը: |
| Հնարավո՞ր է, որ «Վարկային արձակուրդ»-ը երկարաձգվի | Ներկայումս Բանկը չի նախատեսում «Վարկային արձակուրդ»-ի երկարաձգում: Փոփոխությունների դեպքում դրանց մասին առանձին կհայտարարվի: |
| **«Ակնթարթային վարկ»** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում «Ակնթարթային վարկի» համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ:<br>Գ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| **«Ագրո Էքսպրես» վարկ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում «Ագրո Էքսպրես» վարկի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ:<br>Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| **«Բիզնես էքսպրես» վարկ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում «Բիզնես էքսպրես» վարկի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ:<br>Գ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |

| Խնդրահարույց վարկի վերաֆինանսավորման նպատակով տրամադրված վարկ | |
|---|---|
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Խնդրահարույց վարկի վերաֆինանսավորման նպատակով տրամադրված վարկի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ:<br>Գ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| **Ուսանողական վարկ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Ուսանողական վարկի համար | Ա. Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է:<br>Բ. Եթե վարկի ժամկետը լրանում է մարտի 16-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի<br>Ե. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| **Պետական ծրագրի շրջանակներում զինծառայողներին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Պետական ծրագրի շրջանակներում զինծառայողներին կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկի համար | Ա. Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է:<br>Բ. Եթե վարկի ժամկետը լրանում է մարտի 16-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի:<br>Ե. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով |

| | |
|---|---|
| | 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ. է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| **Ջերմ օջախ բնակարանային միկրովարկ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Ջերմ օջախ բնակարանային միկրովարկի համար | Ա. Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է:<br>Բ. Եթե վարկի ժամկետը լրանում է մարտի 16-ից հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի:<br>Ե. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ. է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ. է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| **Աշխատավարձային վարկեր և վային գծեր** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում ամսական հավասարաչափ մարումով Աշխատավարձային վարկի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ:<br>Գ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |

| | |
|---|---|
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում վերականգնվող սահմանաչափով Աշխատավարձային վարկային գծի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով<br>Գ. Վարկի մարումները կշարունակվեն կատարվել համաձայն պայմանների:<br>Դ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում նվազող սահմանաչափով Աշխատավարձային վարկային գծի համար | Ա. Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Բ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի:<br>Գ. Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:<br>Դ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ. է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| **Nur Card Express վարկային գիծ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Nur Card Express վարկային գծի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով<br>Գ. Վարկի մարումները կշարունակվեն կատարվել համաձայն պայմանների:<br>Դ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |

| | |
|---|---|
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| **Վարկային քարտեր** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Վարկային քարտի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով<br>Գ. Վարկի մարումները կշարունակվեն կատարվել համաձայն պայմանների:<br>Դ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| Վարկային քարտը ապահովված է ավանդի գրավով, դրա մասով փոփոխություններ լինելու՞ են | Դրամական միջոցների, այդ թվում՝ ավանդի գրավով վարկերը որևէ փոփոխության չեն ենթարկվի: |
| Ե՞րբ և ի՞նչ մարումներ պետք է կատարել ավանդի գրավով վարկի գծով | Դրամական միջոցների, այդ թվում՝ ավանդի գրավով վարկերը փոփոխության չեն ենթարկվելու, հետևաբար, դրանց գծով անհրաժեշտ է շարունակել կատարել ժամանակացույցով նախատեսված մարումներ:<br>Մարումները հնարավոր է կատարել՝ օգտվելով՝<br>• Արդշինբանկի Մոբայլ Բանկինգ հավելվածից,<br>• Բանկի ինքնասպասարկման սրահներում 24/7 ռեժիմով աշխատող տերմինալներից,<br>• Telcell, Easy Pay, IDram համակարգերի տերմինալներից<br>կամ մոտենալով բանկի մոտակա մասնաճյուղ: |
| **Մեղու քարտ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Մեղու քարտի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով<br>Գ. Վարկի մարումները կշարունակվեն կատարվել համաձայն պայմանների:<br>Դ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով |

| | |
|---|---|
| | նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ. է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| **Կենսաթոշակային վարկային գիծ** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Կենսաթոշակային վարկային գծի համար | Ա. Կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան վարկի վերջնաժամկետն է: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջին ամբողջական մարումը:<br>Բ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի:<br>Գ. Եթե վարկային գծի ժամկետը լրանում է մարտի 16-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, վարկային գծի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով:<br>Դ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ի՞նչ է նշանակում, որ վարկի ժամկետը կերկարաձգվի 3 ամսով | Օրինակ՝<br>1. եթե վարկի մարման վերջնաժամկետը 20.04.2020թ. է, վարկի ժամկետը կերկարաձգվի «Վարկային արձակուրդ»-ից հետո՝ հունիսի 5-ից սկսած՝ 3 ամսով, այսինքն՝ մինչև 05.09.2020թ,<br>2. Եթե վերջնաժամկետը 20.06.2020թ է, վարկի ժամկետը կերկարաձգվի մինչև 20.09.2020թ: |
| Ե՞րբ է սկսվում կուտակված պարտքի մարման 12-ամսյա ժամանակահատվածը | Եթե կուտակված պարտքի մարման համար տրամադրվում է մինչև 12 ամիս ժամանակահատված, ապա մարման օրերը համընկնում են վարկի ժամանակացույցով նախատեսված մարման օրերին՝ սկսած հունիսի 2-ից: |
| **Ոսկու գրավով վարկեր** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Ոսկու գրավով ապահովված, ամսական հավասարաչափ մարումով վարկի համար | Ա. Կուտակված պարտքը կավելացվի վարկի հիմնական գումարին:<br>Բ. Վարկի ժամկետը կերկարաձգվի՝ վարկի ամսական մարման չափը թողնելով հնարավորին անփոփոխ:<br>Գ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |

| | |
|---|---|
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Ոսկու գրավով ապահովված վարկի համար, եթե մարման ժամանակացույցը ամսական հավասարաչափ (անուիտետային) չէ | Ա. «Վարկային արձակուրդ»-ը կերկարաձգվի մինչև հուլիսի 1, այսինքն՝ մինչև հուլիսի 1-ը մարում չկատարելու դեպքում վարկը ժամկետանց չի համարվի, հետևաբար տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվի:<br>Բ. Վարկի երկարաձգման դեպքում համապատասխան նախատեսված վճարները հնարավոր կլինի ավելացնել վարկի գումարին՝ չկատարելով հավելյալ կանխիկ վճարումներ:<br>Գ. Փոփոխությունները չեն վերաբերում այն վարկերին, որոնց գծով 16.03-ի դրությամբ առկա են ժամկետանց պարտավորություններ 45 օր և ավելի տևողությամբ կամ կատարվել են պայմանագրով նախատեսված ամսական մարումները: |
| Ոսկու գրավով վարկի դեպքում, եթե հաճախորդը դիմի երկարաձգման համար՝ վարկի մայր գումարն ավելացնելով, արդյո՞ք վարկի տոկոսադրույքը կփոխվի | Վարկի տոկոսադրույքը սահմանվելու է գործող պայմաններին համապատասխան, հետևաբար, կարող է փոխվել՝ չգերազանցելով պայմաններով նախատեսված առավելագույնը: |
| Հնարավո՞ր է երկարաձգել ոսկու գրավով վարկը՝ առանց ֆիզիկապես Բանկ այցելելու | Հունիսի 2-ից հուլիսի 1-ը կարող եք իրականացնել վարկի երկարաձգում ֆիզիկապես ներկայանալով Բանկ: |
| ***Անշարժ գույքի գրավով ապահովված Էքսպրես սպառողական վարկ*** | |
| Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Անշարժ գույքի գրավով ապահովված Էքսպրես սպառողական վարկի համար | *Տարբերակ 1.* եթե վարկի մարման վերջնաժամկետին մնացել է 12 ամսից ավել<br>Ա. կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ 12 ամսվա ընթացքում:<br>Բ. Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի<br>*Տարբերակ 2.* եթե վարկի մարման վերջնաժամկետին մնացել է 12 ամսից պակաս, օրինակ 7 ամիս<br>Ա. կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ 7 ամսվա ընթացքում:<br>Բ. Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի |

<table>
<tr><th colspan="2">Հիփոթեքային վարկեր</th></tr>
<tr><td>Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Հիփոթեքային վարկի համար</td><td>Տարբերակ 1. եթե վարկի մարման վերջնաժամկետին մնացել է 12 ամսից ավելի<br>Ա. կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ 12 ամսվա ընթացքում:<br>Բ. Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի<br><br>Տարբերակ 2. եթե վարկի մարման վերջնաժամկետին մնացել է 12 ամիս և պակաս, օրինակ 7 ամիս<br>Ա. կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ 7 ամսվա ընթացքում:<br>Բ. Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի:</td></tr>
<tr><th colspan="2">Պարզ վարկեր</th></tr>
<tr><td>Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում Պարզ վարկի համար</td><td>Փոփոխություններ իրականացվելու են միայն ԱՁ Պարզ վարկերի նկատմամբ:<br><br>Տարբերակ 1. եթե վարկի մարման վերջնաժամկետին մնացել է 12 ամսից ավելի<br>Ա. կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական հավասարաչափ վճարումների միջոցով՝ 12 ամսվա ընթացքում:<br>Բ. Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի<br><br>Տարբերակ 2. եթե վարկի մարման վերջնաժամկետին մնացել է 12 ամսից պակաս, օրինակ 7 ամիս<br>Ա. կուտակված պարտքը հնարավոր կլինի մարել ամսական</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | հավասարաչափ վճարումների միջոցով՝ 7 ամսվա ընթացքում:<br>Բ. Վարկի ժամկետը չի երկարաձգվի, մարումները կշարունակվեն համաձայն վարկի մարման գրաֆիկի:<br>Գ. Կուտակված պարտքի մարումները կկատարվեն մնացած մարումների հետ համատեղ: Այսինքն՝ յուրաքանչյուր ամիս պետք է կատարել նախկին ժամանակացույցով սահմանված վճարը և կուտակված պարտքի համապատասխան մասը՝ մինչև վերջինի ամբողջական մարումը:<br>Դ. Կուտակված գումարի վրա հավելյալ տոկոս չի հաշվարկվի: |